

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ
ԲԱԺՆԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության /այսուհետ՝ Նախարարություն/ աշխատակազմի /այսուհետ՝ Աշխատակազմ/ հասարակայնության հետ կապերի բաժինը /այսուհետ՝ Բաժին/ կառուցվածքային ստորաբաժանում է:
2. Բաժինն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերով, Հայաստանի Հանրապետության կառավարության և վարչապետի որոշումներով, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարի /այսուհետ՝ Նախարար/ և Աշխատակազմի ղեկավարի հրամաններով, սույն կանոնադրությամբ:
3. Բաժինը կազմավորում, վերակազմակերպում և նրա գործունեությունը դադարեցնում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:
4. Բաժնի կանոնադրությունը, կառուցվածքը հաստատում /փոփոխում/ է Նախարարը:
5. Բաժինը ղեկավարում է բաժնի պետը:

II. ԲԱԺՆԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԵՆ

6. Բաժնի խնդիրներն են՝
 - 1) Նախարարության տեղեկատվական քաղաքականության կազմակերպումը և իրականացումը.
 - 2) Նախարարության, նրա կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների, Նախարարի, այլ պաշտոնատար անձանց գործունեության վերաբերյալ հասարակայնության իրազեկումը.

3) հասարակական միավորումների և այլ կազմակերպությունների հետ համագործակցության ապահովումը, համատեղ աշխատանքային միջոցառումների պլանավորումը և իրականացումը, տեղեկատվության փոխանակումը.

4) Նախարարի հանձնարարությամբ՝ զանգվածային լրատվամիջոցներում տեղ գտած հաղորդագրությունների, հրապարակումների, այլ տեղեկանքների վերաբերյալ վերլուծական նյութերի, պարզաբանումների պատրաստման կազմակերպումը.

III. ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7. Բաժինն իր խնդիրներին համապատասխան իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) ապահովում է Նախարարի, Աշխատակազմի այլ պաշտոնատար անձանց, Նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների կապը ԶԼՄ-ների հետ.

2) Նախարարության գործունեության ոլորտին առնչվող, հասարակական հետաքրքրություն ներկայացնող թեմաների վերաբերյալ տրամադրում է տեղեկատվական նյութեր.

3) իր իրավասությունների շրջանակներում հանդես է գալիս պարզաբանումներով ու հայտարարություններով.

4) ներկայացնում է առաջարկություններ զանգվածային լրատվամիջոցներով ելույթներում, մշտական թեմատիկ խորագրերում, ռադիո և հեռուստահաղորդումներում Նախարարության պաշտոնատար անձանց մասնակցության վերաբերյալ.

5) Նախարարության տեղեկատվական քաղաքականության իրականացման նպատակով Նախարարության մյուս ստորաբաժանումներից ստանում է անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր, այդ թվում՝ մշակվող իրավական ակտերի, նախագծերի պատճենները և, անհրաժեշտության դեպքում, կազմակերպում է դրանց լուսաբանումն ու հանրային քննարկումը.

6) ամփոփում, վերլուծում և արխիվացնում է Նախարարության գործունեության ոլորտին առնչվող զանգվածային լրատվամիջոցներով հրապարակված նյութերը.